

«Բուսաբանության և սնկաբանության» լաբորատորիա

Բուսաբանության և սնկաբանության գիտական լաբորատորիայում իրականացվում են Հայաստանի տարբեր շրջաններում հայտնաբերված կիրառական նշանակություն ունեցող բույսերի և սնկերի բազմազանության ֆունդամենտալ հետազոտություններ: Ուսումնասիրվում է Հայաստանի բնական և արհեստական էկոհամակարգերի բուսականությունը և տարբեր տաքսոնոմիական և էկոլոգիական խմբերի միկոբիոտան՝ մարդու միկոզների հարուցիչները, ֆիտոտրոֆ և հողային, սննդամթերքը և արդյունաբերական նյութերը աղտոտող սնկերը: Տարվում են աշխատանքներ սննդամթերքը աղտոտող միկոտոքսիզեն սնկերի հայտնաբերման ուղղությամբ: Հայաստանի և Ղարաբաղի առանձին քիչ ուսումնասիրված տարածքներում իրականացվում է սնկերի բազմազանության մոնիտորինգ:

Ուսումնասիրվում են էկոմիկոբիոգային սնկերը, որոնց գույքագրման և գենետիկական կենսաաշխարհագրական/ծագումնաաշխարհագրական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ է համակցել մոլեկուլային, մորֆոլոգիական և աշխարհագրական մոտեցումները: Կատարվում են հետազոտություններ բարձր արդյունավետություն ունեցող ուտելի սնկերի հայտնաբերման և ընտրության ուղղությամբ՝ դրանք սնկարտադրության և դեղագործության մեջ օգտագործելու համար, ինչպես նաև պաթոգեն միկրոօրգանիզմների աճը ճնշող բուսական էքստրակտների կենսաբանական ակտիվության ուսումնասիրության ուղղությամբ: Լաբորատորիայի աշխատակիցները մասնակցում են գիտական և հանրամատչելի հոդվածների և գրքերի, «Հայաստանի բնաաշխարհ» հանրագիտարանի, «Հայաստանի Կարմիր Գրքի (բարձրակարգ բույսեր և սնկեր)» հրատարակմանը, Հայաստանի կենսաբազմազանության Ազգային զեկույցի և մոնիթորինգի ստեղծման գործընթացին և այլն:

Աշխատակիցների ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվել են «Հայաստանի միկոբիոտա» բազմահատորյակի 8 հատոր, նվիրված միկրո- և մակրոմիցետներին: Հրատարակվել են ավելի քան 40 մենագրություն և ուսումնամեթոդական ձեռնարկ:

Գիտական հետազոտությունները աջակցվել են բազմաթիվ միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով (Tempus, DAAD, NEF, ANSEF, FP6/FP7, NFSAT, USDA, ISTC և այլն):

Աշխատակիցներ՝

1.Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի - կ.գ.դ. լաբորատորիայի ղեկավար՝ գլխ. գիտ. աշխ

2.Օսիպյան Լիա Լևոնի - ՀՀ ԳԱԱ ակ. կ.գ.դ., գլխ. գիտ.աշխ.

3.Էլոյան Ինեսսա Մակեդոնի - կ.գ.թ., ավագ գիտ.աշխ

4.Շահազիզյան Իռեն Վաչագանի - կ.գ.թ., ավագ գիտ.աշխ

5.Հովհաննիսյան Եվա Խորենի - կ.գ.թ., գիտ.աշխ.

6.Սողոյան Եվա Յուրիի - կ.գ.թ., գիտ.աշխ.

7.Մարգարյան Լուսինե Վահանի - կրտ. գիտ. աշխ

8.Պետրոսյան Աիդա Միքաելի - կրտ. գիտ. աշխ.

9.Ադամյան Ռուզաննա Գեորգիի - կրտ. գիտ. աշխ.